ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆԻ՝ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԱՂԴԱԴ, Ք. ԷՐԲԻԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Ավետ Պողոսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Իրաքի Հանրապետություն (ք. Բաղդադ, ք. Էրբիլ), 2024թ փետրվարի 26-ից 29-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի՝ Իրաքի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում:

5. **Գործուղման նպատակը.**

   Հայաստանի և Իրաքի միջև բարձր տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ օրակարգային հարցեր քննարկելու նպատակով:

6. **Կայացած հանդիպումները և քննարկված թեմաները.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակության կազմում մասնակցել է օրակարգային մի շարք հանդիպումների, իրաքյան գործընկերների հետ քննարկել կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության, կիբեռանվտանգության, արհեստական բանականության, թվային փոխակերպման, e-commerce, e-government համակարգերի ներդրման ոլորտներում փոխգործակցության հեռանկարներն ու երկկողմ համագործակցության հնարավորությունները, ներկայացրել տեխնոլոգիական ոլորտում Հայաստանի ունեցած ձեռքբերումները, ՀՀ կառավարության որդեգրած պետական քաղաքականությունը, ոլորտի զարգացման նպատակով իրականացվող քայլերը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը գործուղման շրջանակներում կայացած հանդիպումների ընթացքում քննարկել է ոլորտային համագործակցության ընդլայնման, նոր գործընկերային կապերի ստեղծման հնարավորությունները, որոնք կնպաստեն Հայաստանի և Իրաքի միջև բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության ընդլայնմանը:

Ավետ Պողոսյանը պատվիրակության մյուս ներկայացուցիչների հետ միասին ս.թ. փետրվարի 27-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակություն կազմում մասնակցել է Իրաքի Հանրապետության նախագահական նստավայր «Բաղդադ Պալատում» տեղի ունեցած նախագահ Վահագն Խաչատուրյանի դիմավորման հանդիսավոր արարողությանը:

Իրաքի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ս.թ. փետրվարի 28-ին նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը Բաղդադում արդյունավետ աշխատանքային հանդիպում է ունեցել Իրաքի հեռահաղորդակցության նախարարի առաջին տեղակալ Վադի Քարիմ Վադիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում՝ լայնաշերտ ինտերնետի տարածման հայաստանյան մոդելի՝ Իրաքում կիրառման հնարավորության, բջջային կապի օպերատորների մատուցած ռոումինգի սակագների, տիեզերական արդյունաբերության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Ավետ Պողոսյանը հանդիպման ընթացքում պատրաստակամություն է հայտնել թվայնացման գործընթացներում Հայաստանի կողմից աջակցություն ցուցաբերել Իրաքի կառավարությանը փորձագիտական մակարդակում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում աշխատանքային հանդիպումները շարունակել առցանց:

Անդրադարձ է կատարվել տեխնոպարկերի փոխգործակցության, համապատասխան ընկերությունների ու մասնագետների փորձի փոխանակման հնարավորություններին: Քննարկվել են «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իրաքի Հանրապետության Կառավարության միջև տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի» նախագծի ստորագրման հեռանկարները:

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն Իրաքի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում ս.թ. փետրվարի 29-ին Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլում հանդիպում է ունեցել Իրաքյան Քուրդիստանի պատվավոր նախագահ

Մասուդ Բարզանիի հետ: Մտքեր են փոխանակվել առկա փոխշահավետ համագործակցային ներուժի կյանքի կոչման հեռանկարների և կոնկրետ գործողությունների վերաբերյալ: Նույն օրը հանդիպում է տեղի ունեցել Իրաքյան Քուրդիստանի նախագահ Նեչիրվան Բարզանիի հետ: Վերոնշյալ հանդիպումներին մասնակցել է նաև Ավետ Պողոսյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են տնտեսության, բարձր տեխնոլոգիաների, թվային կառավարման, կրթության, գիտության և այլ ոլորտներում փոխշահավետ համագործակցության զարգացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի իրականացման վերաբերյալ հարցեր: Կողմերն ընդգծել են վերոնշյալ ոլորտներում առկա փոխգործակցային ներուժի ամբողջական իրականացման ուղղությամբ ջանքերի ներդրման անհրաժեշտությունը, քննարկվել են համատեղ ծրագրեր իրականացնելու հեռանկարները: Կարևորվել են ներդրումային ծրագրերի իրականացման, ինչպես նաև ներդրումների համար նպաստավոր միջավայրի ձևավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները:

Ս.թ. փետրվարի 29-ին տեղի է ունեցել Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի և Իրաքյան Քուրդիստանի փոխվարչապետ Քուբաթ Թալաբանիի միջև հանդիպումը, որին մասնակցել է նաև Ավետ Պողոսյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են բարձր տեխնոլոգիաների, թվային կառավարման, էներգետիկայի և մասնավորապես կանաչ էներգիայի շահագործման ոլորտներում առկա համագործակցության հնարավորությունները: Փոխվարչապետ Թալաբանին ընդգծել է նորարարական կրթության բնագավառում հայաստանյան հաջողությունների, մասնավորապես՝ «Արմաթ» և «Թումո» կենտրոնների օրինակով լավագույն փորձի փոխանակման ուղղությամբ քուրդիստանյան կողմի հետաքրքրվածությունը: Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել ֆինանսական և բանկային համակարգերի ոլորտներում առկա իրադրությանն ու այս բնագավառներում հայաստանյան բարեփոխումներին ու փորձառության հնարավոր կիրառմանը: Մտքեր են փոխանակվել առողջապահության, կրթության և գիտության ոլորտներում համագործակցության խորացման, ինչպես նաև ուսանողների փոխանակման ծրագրերի հետագա խթանման վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրերի իրականացնման նպատակով: Կողմերը

պատրաստակամություն են հայտնել գործնական քայլեր ձեռնարկել փոխշահավետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Միջազգային համագործակցության վարչություն

04.05.2023թ.